ՀԱՄԱԶԳԱՅԻՆ

—o—

ԷՋՄԻԱԾՆԻՑ ՈՒՂԱՐԿՎԱԾ ՀԵՌԱԳԻՐՆԵՐԸ

I

Թիֆլիս, Նորին Պայծառափայլութիւն Կովկասի Փոխարքային.

Հայկական այբուբենի 1500-ամեայ յօբելեանական հանդէսին ժողովված-ները, հայ ազգաբնակութեան բոլոր խաւերի ներկայացուցիչներ, խնդրեցին ինձ արտայայտել Ձերդ Պայծառափայլութեան խորին յարգանքի զգացմունքները, ցանկանալով լիակատար առողջութիւն, որպէսզի Կովկասը առաջնորդէք դարձեալ խաղաղ կուլտուրական զարգացման ճանապարհով.

Հաճելի պարտականութիւնս եմ համարում տեղեկացնել Ձերդ Պայծառափայլութեան, որ ես առ ոտս Թագաւոր Կայսրի արկանեցի հայ ժողովրդի ամենահաւատարիմ զգացմունքները.

Կաթողիկոս Ամենայն Հայոց Գէորգ Ե

II

Էջմիածնից պատգամաւորներն ուղարկել են Պօղոս փաշա Նուպարին հետևեալ հեռագիրը՝ հոկտեմբերի 13-ին.

«Պարիզ, Նորին Գերազանցութիւն Նուպար փաշա.

«Հայ ազգի պատգամաւորները, գումարված Էջմիածնում, Համազգային Յօբելեանի առիթով, իմանալով շնորհաւորութիւնները և իղձերը, որոնք արտայայտված են Ձեր ներկայացուցչին ուղարկված նամակի մէջ, ներկայացնում են Ձեր Գերազանցութեանն իրանց բարձր յարգանքը և երախտագիտութիւնը Հայկական Դատի հայրենասիրական պաշտպանութեան համար։

«Պատգամաւորների լիազօրութեամբ՝

«Հայկ Տէր-Միքայէլեան»